Յաջողութիւններ ունեցել է Վահագն Դաւթեանը, եւ մեծ յաջողութիւններ: Յաջողութիւնը երբեք չի լքել, ուղեկցել է նրան բանաստեղծութիւնից՝ բանաստեղծութիւն, շարքից՝ շարք, գիրքից՝ գիրք, բայց ինքն ամաչել եւ խուսափել է նրանից օգտուելու հնարաւորութիւնից: Ամէն մի յաջողութիւնը նրա համար եղել է ստեղծագործական նոր պարտքերի հրամայական: Հանրաճանաչութեան գայթակղութիւնն ու լուսածանոյցի գունաւոր ճիշտը Դաւթեանի բնաստեղծութիւնը խորթ են եղել էն գլխից:

Արտաքուստ մեղմ է Վահագն Դաւթեանի բանաստեղծութիւնը,

Ինձ թուն է, թէ Վահագն Դաւթեանն իր բանաստեղծութիւններն այնպէս նրբորէն ու հմտորէն է քանդակում, ինչպէս հայկական հին վարպետներն էին քանդակում խաչքարը: Նրա բանաստեղծական տեխնիկայի վրայ եւ հայ քարագործ վարպետների հգօր ազդեցութիւնն են տեսնում: Նրա պոեզիայում հայկական նշանաւոր տուֆքարի գոյններն են տեսնում նաեւ: Վարդագոյն, դեղնաւուն, շիկաւուն, գորշ, կապտաւուն տուֆքարի: Վահագն Դաւթեանն իր մէջ ներծրծել է այն ամէնը, ինչ հնարաւոր է ներծրծել բնաստեղծողով, պատմութեամբ, ճարտարապետութեամբ, գոյններով, բոյրերով հարուստ հայկական հողից: Նրա հոգին մնաց է գիտնով լի սափորի: Եռում է նոր քանուած գիւնը, թափում սափորի կաւը շուրթերից: Ինձ վրայ ուժգին տպաւորութիւն թողեց նրա այն խոստովանութիւնը, որ բանաստեղծութիւն գրելուց յետոյ իրեն այնպէս է զգում, ինչպէս «վաստակած սերմնացանները»: Նշանակում է՝ մարդն աշխատել է, որքան մեծ է տաղանդը, այնքան աւելի աշխատանք է պահանջում նա: Միայն միամիտ մարդիկ են չափից աւելի վստահում տաղանդին: Բանաստեղծի տաղանդը յամառ աշխատանքով է ապացուցում: Վահագն Դաւթեանն ապացուցել է դա:

Է.Ռ.ՆԱՐԿԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

... Սակայն ամբողջը այսօր, աւաղ, աւեր ոտքի տակ:
Տերեւներն են մահանում՝ մի-մի փոքրիկ նահատակ:

Ամբողջ գիշեր երեւի ցուրտ քամիները շաչել,
Մերկացրել են նրան ու երկնքին են խաչել:

Ու մի տերեւ է միայն մերթ դողողում, մերթ լոռում
Եւ մենաւոր մոմի դէմ ծառի կրծքին թրթռում...

Անձրեւը անցաւ,
Բուրեց հողը տաք,
Յողը ծաղկի մէջ իր աստղը վառեց...

Եւ թրթռացին յանկարծ շուրթերիս
Վաղուց մոռացուած
Հողուս,
Աստղային,
Ճշմարիտ բառեր...

Դու ամէն գիշեր բարձրանում ես, սիրտ,
Գնում ես տրտում ու թափառական,
Ժայռեր են ճամբիդ, ապառաժ է բիրտ,
Մարսուտ է վիհի ու ահ է անկման...

Ծնկներդ արնած բարձրանում ես վեր,
Աւեր բերդի հետ նորից պաշարում,
Աւերում նորից վանքի հետ աւեր,
Այրուած ծայրի հետ նորից այրում:

Գնում, փնտրում ես գետակն այն լապուր,
Բայց չոր քարերին ընկած թարտում,
Եւ գիշերուայ մէջ որոնում ես պուր,
Վերջին եղնիկի բառաշք տրտում:

Գնում, լեռնային լըռուած մի գիւղի
Չանգակատանն ես մոլորում թառում,
Լսում՝ ցաւի պէս ու ցուրտ երկիւղի
Մենաւոր բուն է լալիս խաւարում:

Եւ աղերսում ես հողմերին վայրի,
Որ երբ հունձ անեն իրենց թաթով,
Երբ տանեն ծաղիկն այս դաշտ ու սարի,
Գոնէ չտանեն թուփ ու արմատով:

Ողջ գիշեր այդպէս թափառում ես որբ,
Ապառաժների ծարաւին գամում,
Յետոյ գնում ես, պառկում վիրաւոր
Ու Սեանի հետ լուռ արնաքամում...

Եւ ձայն ես տալիս, կանչում հեքիաթի
Այն մամուռօրուս, վերջին այն մոգին,
Աղերսում, որ գայ ու աստղակաթի
Հրաշքը դնի վերքիդ սրմոքին...

Հանդարտ, ինչպէս ծաղկած մարգագետինը: Բայց փորձիր բարձրացրել, այսպէս կոչուած, ցանքաշերտը... Ինչպիսի բազմաբնուէններ, քար ծակող արմատներ, ստորգետնեայ ջրեր... Հակասութիւնների ինչպիսի միասնութիւն: Հմուտ, թափանցող միտք է հարկաւոր նորերեւոյն համար իտէլայ իրականութիւնից, անձնական անանձնականից, կորուստը ձեռքբերումից, բարձրութիւնը խորութիւնից:

Վահագն Դաւթեանի բանաստեղծութիւններն այնքան կատարեալ են եւ աւարտուն, որ մինչեւ իսկ պատահական ընտրութեան ղեկավարմ էլ, մի յարկի տակ հաւաքուելիս, կարող են գաղափար տալ իրենց հեղինակի ստեղծագործական աշխարհի տեղի եւ նշանակութեան մասին: Ընթերցողը կարող է զգալ նրա ազատ շունչը, շօշափել նրա քնքշութիւնը, առնել նրա բոյրերը եւ, նամանաւանդ, պաշտել բանաստեղծի կերպարը, որը ոչ թէ հնարուած է (ինչպէս յաճախ լինում է), այլ յայտնագործուած, իրեն ճանաչած եւ ինքը մնացած բոլոր պարագաներում: Կերպարը մի բանաստեղծի, որի ամէն մի խօսքը հաւատ է ներշնչում:

Ընթերցողը հաւատում է նրա շնչառութեանը, ակնարկին, դիմախաղին, որովհետեւ բանաստեղծութիւնը նրա համար հոգեվիճակ է, իսկ այդ հոգեվիճակն արտայայտելն՝ անյաղթահարելի պահանջ:

Ես՝ քարեղէն մոլուցք, ձիւնահողմի գանգաւ,
Մաղկաթերթի թախիծ ու մամուռի արցունք:

Հնարաւոր չէ հաւատալ բանաստեղծի այս վիճակներին: Աւելին, հնարաւոր չէ կարգաւորել յետոյ թեզ չզգալ այս վիճակների մէջ: Երեւի սա է Վահագն Դաւթեանի ամենամեծ նուաճումն ու ստեղծագործական սիրանքը:

ՀԱՄՈ ՍԱՀԵԱՆ

Մանկապատանեկան

ՉՈՒՐԻՆ ՄԷՋԻ ՀՍԿԱՆ՝ ԳԵՏԱԶԻՆ


Գետածինը իր օրերը կ'անցնի ջուրի մեջ տապակելով, լողալով, սուզուելով: Այս անասունը աշխարհի ամեն մեծ ստնալորներն է մեկն է, սակայն ան մարդու ջուրը վարժուած է ջուրին մեջի կեանքին:

ԱՐԵՒՈՒՆ ՏԱԿ...

Գետածին շատ կը քրտնի: Երբ արեւուն տակ կը գտնուի, ան անմիջապէս այնքան ջուր կը կորսնցնէ, որ կրնայ աստ-կիլ: Հետեւաբար օրուան ընթացքին գետածին կ'ապրի գետերուն եւ լիճերուն մէջ: Իրիկունը ան ջուրէն դուրս կ'ելլէ՝ ուտելու, սակայն ան միշտ ջուր վերադարձած պէտք է ըլլայ արեւը ծագելէն առաջ:

ՉՈՒՐԻՆ ՄԷՋ...

Գետածին ժամերով գրեթէ ամբողջովին ջուրին մէջ կը մնայ. միայն անոր գնդածեւ աչքերը, ունեզերը եւ ակնջները



մակերեսին վրայ կ'երեւին: Նուազագոյն վտանգ էին, ան ամբողջովին կ'անհետանայ ջուրին տակ: Ան իր շունչը թռնելով կը քայլէ, կը լողայ կամ ջուրին հետ կը շրջի... Չուրին տակ ան շատ աւելի թեթեւ կը զգայ ինքզինքը:

ԳԻՏԵՒՐ, ԹԵ...

Գետածին կ'ապրի Ափրիկէի արեւադարձային դաշտերուն, ջրանցքներուն, գետերուն եւ լիճերուն մէջ:
Անոր երկայնքը կը հասնի 4 - 4,5 մետրի, իսկ ծանրութիւնը՝ 3 թոնի:

ՅԵՒՆԻ ՄԷՋ

Լճակին ցեխը գետածին նախասիրած թաղանթն է: Ան իր խումբով հոն երկար ժամանակներ կ'անցնէ: Հոն ան իսկապէս հանգիստ է, որովհետեւ ոչ մէկ թշնամի կու

ԻՆՉՈՒ ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԿԱՆ



Երբ մենք հետաքրքիր ենք, հազար ու մէկ հարցումներ կը հարցնենք աշխարհին մասին: Հետեւաբար կը կարդանք գիրքեր, դպրոցը կը սորվինք, ուրիշ անձներու հետ կը վիճարանինք, յայտագիրներ կը դիտենք եւ կամաց - կամաց պատասխաններ կը գտնենք: Անշուշտ մենք երբեք ամէն ինչ կրնանք չգիտնալ, սակայն որքան սորվինք, այդքան կը հասկնանք:

Սակայն կան նաեւ հարցումներ, որոնք ո'չ մէկ կը կրնայ պատասխանել:
Նոյնիսկ մեծ գիտնականները կ'ըսեն, թէ չեն գիտեր: Ասիկա կը նշանակէ, որ անոնք հարցումներ են, որոնք չունին միայն մէկ ճիշդ պատասխան, որուն համաձայն են բոլորը: Սակայն անոնք հարցումներ են, որոնք մեզ մէջ իւրաքանչիւրին կը ստիպեն մեր խորքը փնտնելու այն պատասխանը, որուն մենք կը հաւատանք:

ԻՆՉ Է ԼՈՅՍԻ ՏԱՐԻՆ

Աստղերուն միջեւ հեռաւորութիւնները հսկայական են, եւ շատ գործնական չէ գանձել մեթրով կամ քիլոմետրով չափելը: Հետեւաբար աստղագետները ստիպուած եղած են չափելու ուրիշ միւտեր մը գտնել՝ գանձելու քաղաքացիական համար. այս միւտերը լոյսի տարին է:

Երբ ատարկայ մը փայլի, ան լոյս կ'արձակէ: Այս լոյսը կը յառաջանայ մէկ երկվայրկեանին մէջ 300 հազար քիլոմետր արագութեամբ:


Ասիկա այնքան արագ է, որ մենք չենք տեսներ այս տեղափոխութիւնը:

Մէկ լոյսի տարին այն տարածքն է, որ լոյսը կը կտրէ մէկ տարուան ընթացքին, այսինքն՝ 9461 միլիար քիլոմետր:


40,000 միլիար քմ.
4 տարի
Երկրագունդ

Այլապէս Սանթի աստղը կը գտնուի Երկրագունդէն 40,000 միլիար քմ. հեռու: Անոր լոյսը Երկրագունդին կը հասնի 4 տարիէն: Կրննք, թէ Այլապէս Սանթի աստղը Երկրագունդէն 4 լոյսի տարի հեռու կը գտնուի:

Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու դիմակները:



Կրնա՞ս օգնել երկու «նաւաստիներուն» շնաձուկերուն մէջէն գտնելու կղզիին ձա՞մբան:

- գոց կանաչ
- բաց կապոյտ
- նարնջագոյն
- բաց կանաչ
- սրճագոյն
- մոխրագոյն
- կարմիր



Ներկէ՛ հետեւելով նշաններուն:

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:
ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն է: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:


ԼՈՒՐԵՐ՝ ԱՇԽԱՐՀԷՆ

● Եւրօքիշի Շուկանժի տօնեց իր 11-րդ տարեգարձը: Այս ճափոնցին աշխարհի ամէնէն ծեօն անձն է:
● Մասնագէտները Ձի-նասաւանի մէջ գտած են գորտի տեսակ մը, որուն արուն թռչունի մը պէս աղուր կ'երգէ: Անոնք



արձանագրած են անոր «կանչերը» տասներկու ժամուան ընթացքին եւ անդրադարձած են, թէ այս գորտերը կ'երգեն տարբեր տեսակի եղանակներով:
● Հնդկաստանի Նիւ Տելի քաղաքին ընտանի փիղերը պիտի օժտուին լուսաւոր փայլող նշաններով:


րով՝ հեծիկներուն նման: Այս անասունները, որոնք իրենց տիրոջ հետ կը շրջին ճամբաները, յաճախ արկածներու կ'ենթարկուին գիշերները:
● Ամէն առտու մեծ խնդու մը կը յառաջանար Նարվէկիոյ Թրոնտ-հայմի հիւանդանոցին առջեւ: Պատճառը. հիւանդանոցին պաշտօնեաները, որոնք իրենց ամուսինը կամ կինը կը համբուրէին ինքնաշար-



ժէն ելլելէ առաջ: Այս խնդու մեծերուն առաջը առնելու համար հիւանդանոցին պատասխանատուները գտան իւրաքանակ լուծում մը. «համբուրի յատուկ» ինքնաշարներու գիծ մը»:
● 150 մետր երկար սանտուիչ մը շինուած է Հարաւային Ամերիկայի Հոնոլուլու երկրին մէջ: Ան աւելի երկար է, քան՝ ֆուլթայլի դաշտ մը: Ան

պատրաստուած է 2 մետր երկարութեամբ 75 հազար կտորներով, 400 քիլո խոզապուխտով, 1350 լոլիկով, 300 հազարով եւ 270 քիլո պանիրով: Ապա ան կտրուած է 1800 կտորի եւ բաժնուած է բարեգործական միութիւններու կողմէ՝ օգնութեան կարօտ անձերու:

● Շքեղ պանդոկ մը բացուած է Միացեալ Նահանգներու մէջ... շուկան եւ կատուներու համար: Ան իր յաճախորդներուն կ'առաջարկէ լոգարանով եւ պատկերասրբոտող սենեակներ: Անասունները հոն կը խնամուին եւ լաւ հոգ կը տարուի իրենց: Անոնք տերերը



պէտք է վճարեն մօտաւորապէս 70 տոլար, որպէսզի իրենց նախասիրած անասունը գիշեր մը անցընէ այդ վայրին մէջ:

ՀԱՐՑԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- 1) Ո՞րն է եւրոպական Միութեան ամենէն փոքր երկիրը:
- 2) Քանի՞ արբանեակ ունի Սաթիրը մոլորակը:
 - 9
 - 12
 - 18
- 3) Մանհաթանը կղզի մըն է:
 - Ճիշդ
 - Միայն
- 4) Գերմանիոյ ո՞ր քաղաքին մէջ տեղի կ'ունենայ նշանաւոր Գարնջուրի տօնը:
 - Պերլին
 - Յրանքֆորթ
 - Միւնխի
- 5) Չուտ ոսկին ունի՞
 - 10 քարաթ
 - 24 քարաթ
 - 100 քարաթ
- 6) Ո՞ր իտալական քաղաքը կը յիշուի փարմը-

- սան պանիրի անուցին մէջ:
- 7) Ո՞ւր կը գտնուի Փըրլ Հարպըրը:
 - Հաուայի մէջ
 - Թահիթիի մէջ
 - Պորտ Պորայի մէջ
- 8) Ո՞վ հնարած է շանթարգելը:
 - Տալթըր Լենտ
 - Վոն Զեփելին
 - Պեննամին Ֆրէնքլին
- 9) Ո՞ր առասպելական քաղաքը իր շինած արձանին կը սիրահարի:
 - Ակամմոն
 - Մենելաոս
 - Փիկմալիոն
- 10) Ո՞ր քաղաքակրթութեան մէջ երկայնացուած էր Քրոնոտր արձիւը:
 - Եգիպտոս
 - Հրեաներ
 - Ռոմներ
- 11) Ո՞ր շրջանը կը գտնուի Տիգրիս եւ Եփրատ գետերուն միջեւ:

- 12) Զինաստանի ո՞ր շրջանին մէջ կը գտնուի իսլամ ժողովուրդ մը:
- 13) Ինչի՞ պատճառով Փորթուգալի Լիզբոն քաղաքը գրեթէ ամբողջովին քանդուած էր 1755 թուականին:
 - Հրդեհի մը
 - Երկրաշարժի մը
 - Քաղաքական պատերազմի մը
- 14) Ի՞նչ կը կոչուի Լոնտոնի գրասենեակներու եւ դրամատուներու կեդրոնը:
- 15) Ո՞ր երկրին մէջ տեղի ունեցաւ Աշխարհի ֆուլթայլի ախոյեանութիւնը 1998ին:

ԼՈՒՄՈՒՄՆԵՐԸ՝ ԷՋ 8

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍԻԼՎԻ ՊԵՆԵԼԵԱՆԻ մահուան քառասունընգիս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՅՐՈՒԹ ՀԱԼԷՊ ԼԵՈՆ-ՍԱՐԳԻՍ ՍԻՄՈՆԵԱՆԻ, ՄԱՆՈՒԷԼ ԵՒ ՍՕՍԻ ՍԻՄՈՆԵԱՆԵՐՈՒ մահուան քառասունընգիս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Պէյրուս Ժուրիէի Ս. Զարուբին եկեղեցւոյ եւ Հալէպ՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՏԻԳՐԱՆ ԱՐԱՊԵԱՆԻ (քերդապահ) մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱՐԴԱՆ ԹԸԼԸՍՄԵԱՆԻ մահուան քառասունընգիս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Ռըմէլի Ս. Զարուբին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԱԻԷՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԵՐՄԻՆԷ ՍԱԱԹՃԵԱՆԻ մահուան քառասունընգիս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Ժուրիէի Ս. Զարուբին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅՆՃԱՐ ԱՍՊԵՏ ԲԱԲԻՍԵԱՆԻ մահուան 15րդ տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱՐՊԻՍ ՊԵՋՃԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՕԶԱՆ ԷՍՄԵՐԵԱՆԻ մահուան քառասունընգիս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱԿՈԲ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ մահուան քառասունընգիս առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Յունիս 2003, Նոր Ատաճայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԷՋԻ ՀԱՐՅԱՐԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

- 1) Լիւքսամպուրկ, 2) 18, 3) Ճիշդ, 4) Միւնիխ, 5) 24 քարք, 6) Փարմա, 7) Հաուայ, 8) Պեննամին Ֆրէնքլին, 9) Փիլիմալոն, 10) Էնքաներուն մօտ, 11) Միջագետք, 12) Քսից Ժիանկ, 13) Երկրաշարժ մը, 14) Տը Սիբի, 15) Ֆրանսայի մէջ:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամանիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երկ. Սուրիական թղթուկի 32,35 - 32,45 լ.ն. Իրաքեան տինար 4850,00 - 4860,00 լ.ն. Բուէյթեան տինար 5032,00 - 5057,00 լ.ն. Զորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն. Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն. Ա.Մ. Էմիրութեանց տիրիամ 410,75 - 412,75 լ.ն. Բաքարեան ռիալ 413,75 - 415,75 լ.ն. Սէուտական ռիալ 402,00 - 404,00 լ.ն. Օմանեան ռիալ 3895,00 - 3920,00 լ.ն. Եգիպտական կինէ 249,00 - 259,00 լ.ն. Անգլիական սթըրլին 2508,00 - 2518,00 լ.ն. Չուիքերիական ֆրանք 1152,00 - 1157,00 լ.ն. Թրքական լիրա 104,00 - 104,50 լ.ն. Կիպրական փաունտ 3015,00 - 3040,00 լ.ն. Ճափոնական հապար եէն 12,70 - 12,80 լ.ն. Ափրիկեան հապար ֆրանք 13,25 - 13,30 լ.ն. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն. Բանատական տոլար 1113,00 - 1118,00 լ.ն. Աստրալիական տոլար 995,00 - 1000,00 լ.ն. Եւրօ 1780,00 - 1790,00 լ.ն.

● ՈՍԿԻ Անգլիական մէկ ոսկի 142,000 - 147,000 լ.ն. Իրանեան մէկ ոսկի 127,500 - 132,500 լ.ն. Օսմանեան մէկ ոսկի 118,000 - 123,000 լ.ն. Մէքսիքական փէտոս 678,000 - 698,000 լ.ն. Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 17,685,000 - 17,885,000 լ.ն. Մէկ օնս ոսկի 367,00 - 367,50 \$ Մէկ օնս արծաթ 4,50 - 4,52 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը. Եւրօ 1.1806 - 1.1813 Բանատական տոլար 1.3515 - 1.3525 Զուիքերիական ֆրանք 1.3076 - 1.3086 Ճափոնական եէն 117.93 - 118.03 Մէկ սթըրլին 1.6649 - 1.6659 Մէկ քոլար 560 դրամ


● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ Գիցի Ա. ճշդում Գիցի Բ. ճշդում Ա. կարգ 4 6/8 4 7/8 Բ. կարգ 5 5

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԵՍԱՆԵՐՉՈՒԹԻՒՆ

ՅՈՒՅԱՍՐԱՀՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ ՇՐՋԱՊԱՏՈՅՏՆԵՐ



Յուցադրուած գործերն օրինակ մը

Լիբանանի Ամերիկեան համալսարանի (Էլ. Էյ. Շու.) ուսանողական գեղարուեստական ցուցահանդէսը իր տարեկան աւանդութեամբ կը ներկայացնէ համալսարանին ուսանողներուն գեղարուեստական արտայայտութիւնները՝ գեղանկարներէ մինչեւ քանդակագործութիւն ու կաւագործութիւն: Համալսարանին շրջափակին մէջ տեղի ունեցող այս ցուցահանդէսը, որ տեղի կ'ունենայ իրաքանչիւր ակադեմական տարեշրջանի աւարտին, կը համարուի ամբողջ տարուան ընթացքին համալսարանի գեղարուեստական նիւթերու դասաւանդութիւններուն հետեւած ուսանողներուն ձիգերը:

Յուցահանդէսը, որուն ընդգրկած գործերը ընդհանրապէս մեծադիր իշխանկարներ են, կը ներկայացնէ անկենդան բնութիւններ, բնականներ եւ վերացապաշտ ճճի գեղանկարներ: Յուցահանդէսը կը շարունակուի մինչեւ

Ամրան սեմին մեծ թափ կը ստանան դէպի լիբանանեան պանազան շրջաններ կապմակերպող շրջապտոյտներն ու հետախուզական արշաւները: Այս ծիրէն ներս Լիբանանն ուսնոր բնութիւնը լիբանանցիին եւ ոչ լիբանանցիին աւելի լաւ ծանօթացնելու նպատակով գերմանական մշակութային «Քիւլթուրֆոլմընտըմ» հիմնարկը յառաջիկայ օրերուն կապմակերպած է երկու նախաձեռնութիւն, զորս կը ներկայացնեն ստորեւ.

Կ'ընդգրկէ լիբանանեան աւանդական գիւղերու մէջ պտոյտներ, գիւղական կենցաղի ծանօթացում եւ անոր մատուցած բարիքներուն վայելումը: 18 Յունիս - «Պտոյտ դէպի Թանուրի» խորագրեալ դասախօսութիւն մը, որ ծանօթացնելէ ետք Թանուրիի մայրիկներու անտառն ու անոր բնական հարստութիւնները, շեշտը պիտի դնէ երկրին բնական հարստութիւններուն պահպանման:

Կիրակի, 15 Յունիս: 15 Յունիս - «Շրջապտոյտ դէպի Տումա», որ

ԱՅՍՕՐ

- Նուագահանդէս՝ Մոցարթի «Իմ փրեսարիօ»-ն, Մորիս Օ'Տէյ Նիքոլաս եւ Ռիմ Տիպ (սոփրանօ) եւ Էնկետր Շամմաս (թենոր), ժամը 20:30ին, ԵՈՒՆԵՍՔՐՈՒ մէջ: - Յուցահանդէս՝ «Ուրուկուէյ - Լիպան. Էօն վուլքաթ վեր մէ ռասիմ», Պրուլու Սֆէյրի գործերը, «Սերվանթես» Հիմնարկին մէջ, մինչեւ 20 Յունիս: - Յուցահանդէս՝ «Փորթրէ տը միւզիպիէն տը ճեզ», «Կէօթէ» Հիմնարկին մէջ, մինչեւ 2 Յունիս: - Թատրոն՝ «Օ Սիէլ», ժամը 20:30ին, «Մետիցէ» թատերասրահ, մինչեւ 18 Յունիս: - Նկարչական ցուցահանդէս՝ «Թէն Վիուզ», «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 28 Յունիս: - Թատրոն՝ «Սոլո», ժամը 20:30ին, «Մետիցէ» թատերասրահ, մինչեւ 21 Յունիս:

ԱԶԳԱԿ 50 ՏԵՄՐԻ ԿՈՒՄԱՆ 14 Յունիս 1953

54 ՏԱՐԵԿԱՆ «ՀԱՅՐԵՆԻԲ» 1899ԷՆ Ի ՎԵՐ ԱՆԸՆԴՀԱՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ամերիկայի շրջանին պաշտօնաբերը «Հայրենիք» աշօր կը լրացնէ իր հրատարակութեան 54րդ տարին 12,476 թիւ: Մինչեւ 1915 եղած է շարքաբերք եւ յետոյ երկօրեայ եւ այդ բուականեան անդին լոյս կը տեսնէ ամէն օր: «Հայրենիք» ոչ միայն Մ. Նահանգներու, այլեւ արտասահմանեան Հայաստանի մէջ, ամէնէն մեծ շրջաբերութիւն ունեցող թերթն է: Մեր թերթը իր ժողովրդակառնութիւնը կը պարտի այն իրողութեան, որ եղած է միշտ հայ ժողովուրդին հետ, կանգնած է միշտ հայ ժողովուրդին թիկունքին, պաշտպանած է (ՀԱՏՈՒԱԾ)

ԱՅՍՕՐ՝ 14 ՅՈՒՆԻՍԻՆ

- 1861. - Ծնունդ ժժ. - Ի. դարերու հայ գրական վերածնունդի ամենափայլուն դէմքերէն, հասարակական եւ պետական բազմատաղանդ գործիչ՝ Գրիգոր Զօհրապի: ■ 1915. - Սկիզբ ծապին Գարահիսարի հերոսամարտին: ■ 1968. - Մահ վաստակաւոր հրապարակագիր, «Հայրենիք» անագիր իր խմբագրապետ Ռուբէն Դարբինեանի (Պոսթըն)

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

- ★ ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) Հեռաւորութիւնները չեն կրնար պակսեցնել սերը երկու սիրողներու սրտէն: Անոնք կրնան զիրար հասկընալ եւ նոյնիսկ թիրիմացութիւնները վանել մեղմ կերպով: ★ ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս) Պարբերաբար դադար տուէք ձեր վագրին, որպէսզի հանգստանաք կամ հանգարտութեան մէջ մտածեք ձեր ապագայ ընելիքներուն մասին. շատ գոհ պիտի մնաք արդիւնքէն: Դուք ձեր հանգստին մասին եւս մտածեցէք: ★ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) Այն անձը, որուն հետ ձեր կեանքը կիսած էք, եթէ յոգնութեան նշաններ ցոյց տայ, անոր առաջարկեցէք մարմնով մը, որպէսզի ֆիզիքական յոգնութիւնը փարտի: Այսպիսով առաւել երջանիկ պիտի զգաք եւ իրարու հանդէպ առաւել վստահութիւն պիտի ցուցաբերէք: ★ ԽՆՏԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յունիս) Կազմակերպողի մեծ տրամադրութիւն պիտի ունենաք այսօր: Նոյնիսկ պիտի փափաքիք ձեր սեղմ շրջանակը հրաւիրել ճաշի եւ գոլաբանակ: Լաւ միտք է: ★ ԱՌԻԻՏ (24 Յունիսին 23 Օգոստոս) Այսօր ձեզ պիտի հրապուրեն ծովը, լողաւազանը կամ պարտիզանցութիւն մը՝ ձեր գաւակներուն հետ հանդիսանալու: Այդ պահերը պիտի ստեղծուին եւ օրը պիտի անցնի գուրբ մը քնոյտի մէջ: ★ ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Կ'ուզեք տեղափոխուիլ, փոփոխութիւն մը բերել ձեր կեանքին մէջ, բայց չէք կրնար փափուկ բոլոյ մը անցնել, ձեր երազը իրագործել: Քիչ մը եւս համբերեցէք: ★ ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Ձեր բաց սիրտ ըլլալը պիտի գնահատուի, պիտի կարենաք ձեր փափաքը իրագործել եւ արժանանալ ձեր շուրջիներուն բարձր գովեստին, նաեւ՝ ձեզի սիրելի անձին: ★ ԿՍՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Պիտի կարենաք սուղ ապրանքներ գնելու ձեր փորձութեան դիմադրել: Ու ահիկա՝ հակառակ անձի մը պարտադրանքին, գոր պիտի կարենաք անտեսել. պատե՛՛ւ... ★ ԱՆԵՆԱԻՌ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Իհարկեցէք ժամանակ տրամադրել անձ մը հրապուրելու ձեր ջանքերուն, անձ մը, որ հագու կը տեսնէ ձեզ: Չ'արժեք անոր համար նուիրուիլ: Անկէ աւելի արժեքաւոր անձեր կան, զանոնք հետապնդեցէք: ★ ԱՅՏԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Շատ ընելիքներ ունիք, շատ ծրագրեր կան, բայց այսօր պիտի չունենաք պէտք եղած տրամադրութիւնը զանոնք իրագործելու: Սպասեցէք յարմար առիթի: ★ ՇՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար) Շատ գուրբ երեկոյ մը ձեզ կը սպասէ ձեր սիրելի բարեկամներուն հետ: Շատ հանգիստ պիտի զգաք հոգեկան եւ ֆիզիքական իմաստով: Նրանքի օր մըն է այս: ★ ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) Եթէ առեւտուրով կը զբաղիք, օրը փայլուն պիտի ըլլայ: Այս չի նշանակել, թէ ամէն ինչ ձեռնարկ պիտի ըլլայ: Սպասեցէք վաղուան, որ պիտի ըլլայ յուսալից:

1. Մօտիկ անցեալին - Աղբիւր: 2. Իգական անուն - Տոյժ: 3. Հասակ - 420 - Չըր-չիլի, Ռուզվէլթի եւ Ստալինի ժամադրաւայրը: 4. Ինչպէս - Ազօրիքի ձագարի տուն: 5. Զայնակից տաներ - 100 տարի - Ալբուրնին: 6. Յոյն դիցուհի - Նիւ-Հար: 7. Ալբուրնին - Արական օտար անուն - Զայնանի: 8. Տէյվիտ Լինչի ֆիլմերէն - Ժխտական մասնիկ: 9. Զգնաւոր, մենակեաց: 10. Որակ - Եղբանացու: 11. Շէյքսպիրի երկերէն «... Արքայ» - Չուտ:


ԽԱԶԲԱՌ ԹԻԻ 5461 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆՅԵԱՅ

1. Գձուձ, անարգ - Մեծ մայր: 2. Յետմիջօրէ - Կառուցանել: 3. Կրկնուած բաղաձայններ - Գուսան Արմենակ Մարկոսեան: 4. Զպոտ - Իրերայաջըող գիրք - Ուտեստ: 5. Օսմանեան զօրագունդ - Փերթաքանդ մասնիկ: 6. Ալբուրնին - Բացաւձ: 7. Զառի մը անունը - Յարդանկողին: 8. Թուլասիրտ - Հակած: 9. Աղբ քիչ - Եւրոպական ինքնաշարժի տարատեսակ: 10. Թեթեւօրէն անձրեւել - Արու ուղտ: 11. Յուցական ածական - Էրի եղբայր - Նոյն տառերը:

ԹԻԻ 5460 ԽԱԶԲԱՌԻՆ ԼՈՒՆՈՒՄԸ

Մ Ա Ր Չ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ՖՈՐՄԱԿԱՆ

ՎԱՂԸ՝ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԿՐԱՆ ՓՐԻՆ


Վաղը՝ Կիրակի տեղի կ'ունենայ Ֆորմուլա 1-ի 2003-ի աշխարհի ախույեան ու թեան 8րդ կրան փրին՝ Մոնրեալի մէջ, Բանատա:

Պէյրուի ժամանակացոյցով ժամը 20:00-ին սկսելիք այս կրան փրին, որուն երկարութիւնն է 305 քմ., կ'ընդգրկէ 69 լէփ: Այս վազքուղին շինւած է 1978-ին եւ կրնայ հիւրընկալել հարիւր հազար համակիր:

2001-ին այս կրան փրին տիրացած գերմանացի Ռալֆ Շումպերը, որուն կը պատկանի այս



Պաթըն



Բանատայի վազքուղի

վազքուղիին ամէնէն արագ լէփը՝ 1 վայրկեան 17" 205 (մրցանիշ մը), վստահաբար իր ամէն կարելին պիտի ընէ այս տարի ալ լաւ արդիւնք արձանագրել, թէեւ անոր եղբայրը՝ Միքայել իր Ֆեռարիով անցեալ տարի տիրացաւ կրան փրին:

2003-ի առաջին կրան փրին (Աստրալիա) շահած բրիտանացի Տէյվիտ Քուրթարտ, որ յաջորդ վեց կրան փրիններուն ընթացքին փոստիումին վրայ չգտնուեցաւ, յոյսով է որ վաղը յաղթանակ մը պիտի արձանագրէ ախույեանութեան պայքարին մէջ տեսնելու համար ինքզինք, որովհետեւ ան այժմ 23 կէտով ետ կը մնայ վարորդներուն ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող Մաքարընի իր խմբակիցէն՝ Բիմի Ռայթընընէն:

Բրիտանացի Եսաըն Պաթըն (ՊԱՐ-Հոնտա) երէկ կանաչ յոյս ստացաւ մասնակցելու համար Մոնրեալի կրան փրին, երբ անոր վրայ կատարուած քննութիւնները փաստեցին, որ ան ի վիճակի է մասնակցելու այս կրան փրին:

Շուրջ 13 օր առաջ, 23 տարեկան Պաթըն ուշքը կորսնցուց, երբ Մոնաքոյի կրան փրին փորձերուն ընթացքին իր ինքնաշարժով արկած մը ունեցաւ եւ փոխադրուեցաւ հիւանդանոց:

Նշենք, թէ այժմ վարորդներուն ընդհանուր դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	ԿԵՏ
1.- Բիմի Ռայթընըն (Ֆինլանտա)	Մաքարըն 48
2.- Միքայել Շումպերը (Գերմանիա)	Ֆեռարի 44
3.- Ֆեռնանտո Ալոնսո (Սպանիա) Ռընո	29
4.- Ռուպէն Պարիքէլլո (Պրաչի) Ֆեռարի	27
5.- Խուան Փալլո Մոնթոյա (Քոլումբիա)	Ուիլիըմս 25
6.- Տէյվիտ Քուրթարտ (Բրիտանիա)	Մաքարըն 25

Իսկ խումբերու դասաւորման պատկերը հետեւեալն է.	ԿԵՏ
1.- Մաքարըն	73
2.- Ֆեռարի	71
3.- Ուիլիըմս	50
4.- Ռընո	42
5.- Ճորտըն	11
6.- ՊԱՐ	11
7.- Մաուպըր	8
8.- Տակուար	4
9.- Թոյրթա	3

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Ո՞Ր ՌԵԱԼԸ. ՄԱՏՐԻ՞Տ, ԹԵ ՄՈՍԿԵՏԱՏ...

Հակառակ անոր, որ Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ (Քալչիօ) եւ Գերմանիոյ (Պուստալիկա) 2002-2003 եղանակի ախույեանութեան մրցումները աւարտեցան անցեալ ամիս, սակայն Սպանիոյ մէջ տակաւին եղանակը չէ աւարտած եւ ախույեանի ճակատադիրը յստականալու համար երկու հանգրուան կայ:

Պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մոսկետատ, որ այսօր հիւրը պիտի ըլլայ Սելթա Վիկոյի (4րդ), այժմ մէկ կէտի առաւելութիւն մը ունի Ռէալ Մատրիտի վրայ (2րդ), որ հիւրը պիտի ըլլայ Աթլետիքո Մատրիտի (11րդ):

Երկու կայմերն ալ քիչ մը դժուար մրցում մը ունին կատարելիք իրենց դաշտերէն դուրս, հետեւաբար անոնցմէ որեւէ մէկը վստահաբար պիտի չփափաքի երեք կէտ կորսնցնել:

Թուաբանական հաջիւններով, Ռէալ Մոսկետատ վաղն իսկ կրնայ ախույեան հոշակուիլ, անշուշտ եթէ երեք կէտ խլէ Վիկոյէն, սակայն միեւնոյն ժամանակ ալ Աթլետիքո Մատրիտ պէտք է պարտութեան մատնէ Ռէալ Մատրիտը:

Այս մէկը տեղի ունենալու պարագային Մոսկետատ չորս կէտի առաւելութիւն մը պիտի ունենայ Մատրիտի վրայ, ինչ որ կը նշանակէ, թէ 38րդ եւ վերջին հանգրուանի մրցումները պիտի ըլլան անկարելի:

Մոսկետատ, որ վաղը պիտի այցելէ Վիկոյի դաշտը, քիչ մը դժուար առաքելութիւն մը ունի կատարելիք, որովհետեւ վերջին անգամ 21 տարի առաջ Սպանիոյ ախույեան հանդիսացած, անիկայ իր վերջին 13 այցելութիւններուն ընթացքին (զիտ յետեւ ու թեան գծով) անոր «Պալաչո»-ն դաշտէն յաղթանակ է կրցած վերադառնալ: Մոսկետատի համար սակայն ուրախ յուրը պիտի ըլլայ

այն, թէ Վիկոյի երկու հիմնական յետսպահները՝ Ֆեռնանտո Քասերէս եւ Խուանֆրանկո Կարսիա պիտի բացակային (կախակայուած):

Մատրիտեան տերպիւն՝ Աթլետիքոյի եւ Ռէալ Մատրիտի միջեւ վստահաբար, որ պիտի ըլլայ կարելու ունի քաղաքի երրորդ խումբին Մոսկետատի համար, որ պիտի ուզէ իր եւ Աթլետիքոյի յաղթանակը, որպէսզի վերջին հանգրուանին դժուարութիւններու առջեւ չգտնուի, երբ հիւրընկալէ իտալիական Աթլետիքո Մատրիտը: Ռէալ Մատրիտի վերջին հանգրուանի մրցակիցը պիտի ըլլայ Աթլետիքո Պիլայօ:

Յոյ դիրքը գրաւող Տեփորթիօ Քորուսալի տիտղոսին տիրանալու յոյսերը շատ չնչին են: Անիկա այդ

պայքարին մէջ դարձեալ պիտի մտնէ այն ատեն միայն, երբ առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը պարտութիւն կրեն եւ ինք յաղթանակ մը արձանագրէ, վաղը՝ Կիրակի, երբ պարտութեան մատնէ Աթլետիքո Պիլայօն (6րդ): Վերջին հանգրուանի մրցումներուն անիկա իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Էսպանիոլը:

Պարսելոնա (7րդ), վաղը դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Վալենսիայի դաշտը (5րդ), իր ամէն կարելին պիտի ընէ յաղթանակ մը արձանագրել, որպէսզի յաղթանակ եղանակին ետ. Է. Է. Բ. Ա. Ին տուն մը արպահովէ: Վերջին հանգրուանին, անիկա իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Սելթա Վիկոն:

Ստորեւ՝ 37րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուի ժամով).

ԱՅՍՕՐ	ԺԱՍ
Ռէալ Վալադոլիտ - Ռայօ Վալեքանօ	20:00-ին ՎԱՂԸ
Օսասունա - Ալաւէս	20:00-ին
Աթլետիքո Պիլայօ - Տեփորթիօ Քորուսալ	22:00-ին
Աթլետիքո Մատրիտ - Ռէալ Մատրիտ	22:00-ին
Ռէալ Պէթիս - Ռասիոն Կանտանիլ	22:00-ին
Սելթա Վիկո - Ռէալ Մոսկետատ	22:00-ին
Էսպանիոլ - Վիարէալ	22:00-ին
Մալախա - Սելիլլա	22:00-ին
Ռեքրէաթիօ Հուէլվա - Մալորքա	22:00-ին
Վալենսիա - Պարսելոնա	22:00-ին

Ստորեւ՝ 38րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

Ալաւէս - Ռէալ Վալադոլիտ	Օսասունա
Ռասիոն Կանտանիլ - Օսասունա	Վիարէալ - Ռէալ Պէթիս
Տեփորթիօ Քորուսալ - Էսպանիոլ	Ռէալ Մատրիտ - Աթլետիքո Պիլայօ
Ռէալ Մոսկետատ - Աթլետիքո Մատրիտ	Պարսելոնա - Սելթա Վիկո
Սելիլլա - Վալենսիա	Մալորքա - Մալախա
Ռայօ Վալեքանօ - Ռեքրէաթիօ Հուէլվա	

Նշենք, թէ առաջին ութ դիրքերուն դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	ԿԵՏ
1. Ռէալ Մոսկետատ	73
2. Ռէալ Մատրիտ	72
3. Տեփորթիօ Քորուսալ	69
4. Սելթա Վիկո	58
5. Վալենսիա	57
6. Աթլետիքո Պիլայօ	52
7. Պարսելոնա	50
8. Սելիլլա	50

ԵՈՒՎԷ Կ ՈՒՉԷ ՉԵՌՔ ՉԳԵԼ ՎԵՐՈՆԵՐ

Իտալական եւ բրիտանական մամուլին համաձայն, Իտալիոյ ախույեան հանդիսացած Եուզենթուսայի մը աշխատանք կը տանի իր կազմին միացնել Մանչէսթըր Եուենթուսայի արժանիքի միջնապահ Խուան Սեպուլիան վերոնը: Անցեալ Ապրիլին Վերոնի փոխանցումը ուղղակի յայտարարուած է վճարել 20 միլիոն եւրօ:

Իտալական կազմին պատասխանատուները վերոնը ձեռք ձգելու համար, պատրաստ են մարզիկներու փոխանակում ալ կատարել, ուր հակառակ ուղղութեամբ պիտի մեկնին հոլանտացի միջնապահ Զոլկար Տալիտը եւ ֆրանսացի յետսպահ Լիւիան Թիլլարմ: Մանչէսթըր Եուենթուսայը

մարզիկ Ալեքս Ֆերլըսըն, թէեւ միշտ ալ մօտէն հետաքրքրուած է այդ երկու մարզիկներով, սակայն Եուզենթուսայ մէկ ճիգ կը խնայէ անոնցմէ «ձեռքազատելու» համար, որովհետեւ Տալիտի պայմանագրութիւնը կ'աւարտուի յառաջիկայ ամառ, երբ ան այսպիսով կը դառնայ ազատ մարզիկ մը, որմէ ետք կրնայ միանալ իր նախորդը կազմին, իսկ Թիլլարմը հարցեր եւ տարակարծութիւններ ունի իր մարզիկին՝ Մարչելլո Լիփիի հետ:

ՓՈՐՔՈՅԻ Խմբապետ Նունօ Քափուչօ, որ կը մտադրէ միանալ Սիլվիոյ յառաջիկայ շաբաթ ճորտի, յառաջիկայ շաբաթ պիտի մեկնի Կլաւսօ, հոն պայմանագրութիւն ստորագրելու սկզբունքով կ'աւարտուի 31 տարեկան Քափուչօյի փոխանցումը կրնայ արժեք ութ հարիւր հազար փութաւտ, ըստ երկու ակումբներուն միջեւ կնքուած համաձայնագրին:

Ռէյնօլդ ամէն գնով կ'ուզէ կատարել այդ փոխանցումը, որովհետեւ խումբին հիմնական մարզիկներուն թիւը հետզհետէ կը պակսի: Աթլետիքո Նուման եւ Բլաուտիօ Քանիֆա, որոնք իրենց պայմանագրութիւնը ձեռնարկեցին իտալացիներէն, հետագային խումբին: Լորենցօ Ամորոսօ շատ հաւանաբար ամառն ընթացքին այլ կայմի մը փոխանցուի, ինչպէս 21 տարեկան Միքէլ Արթեթա կ'ուզէ իր երկիրը (Սպանիա) վերադառնալ:

ՀԱՏՐԱԿ

ՎԼԱՏԻՍԻՐ ՅԱԿՈՒԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՍՏԱՅԱԿ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ

Պոլսոյ մէջ (Թուրքիա) տեղի ունեցող ճատրակի Եւրոպայի անհատական ախույեանութեան 12րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումներուն, Հայաստանի լաւագոյն վարպետներէն Լեւոն Արոնեան հակառակ իր արձանագրած հաւասարութեան, տակաւին յոյս ունի մրցաշարքը աւարտելու պատուաբեր դիրք մը գրաւելով: Յարգ ոչ մէկ պարտութիւն կրած Արոնեան այժմ ունի 8 կէտ եւ կէս կէտով կը գերազանցէ Կարէն Ասրեանը:

Իր կատարած վերջին մրցումին պարտութիւն կրած Գարրիէլ Ասրեան, այժմ ունի 7 կէտ: Անոր նման 7ական կէտ ունեցող Սմբատ Լպուտեան, Ռաֆայել Վահանեան եւ Աշոտ Անաստասեան, որոնք իրենց կատարած վերջին մրցումին յաղթանակ արձանագրեցին:


Աղջկանց մրցաշարքին 9րդ հանգրուանի մրցումներէն ետք, այժմ Լիլիթ Մկրտչեան 7 կէտով կը գտնուի առաջնակարգ դիրքերու վրայ: Իրենց կատարած վերջին մրցումներուն յաղթանակներ արձանագրած էլին Դանիէլեան եւ Լիլիթ Քարոյեան, ինչպէս նաեւ պարտութիւն կրած Գոհար Խլիթեան յոյս չունին մրցաշարքը լաւ դիրքերու վրայ աւարտել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ճատրակի լաւագոյն վարպետ Վլատիմիր Յակոբեան, որ ճատրակի միջազգային Ֆետերասիոնին (ՖԻՏԷ) կողմէ հրապարակուած ընդհանուր դասաւորման մէջ կը գտնուի առաջին քսանի մէջ, իրաւունք ստացաւ իր մասնակցութիւնը բերելու ճատրակի աշխարհի անհատական ախույեանութեան մրցաշարքին: Երէկ, Զուիցերիոյ մէջ սկսաւ ճատրակի միջազգային մրցաշարք մը, որուն իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Յակոբեան:

ԹԵՆԻՍ

ԱԿԱՍԻ՝ ԱՌԱՋԻՆ

Լոնտոնի մէջ (Բրիտանիա) տեղի ունեցող տղոց թենիսի «Սթեյլա Արթուս» միջազգային մրցաշարքի քառորդ աւարտականի երէկուան մրցումներուն, 2րդ դասուած ամերիկացի Անտոնի Ակասի ոչ թէ միայն յաղողեցաւ իր արձանագրած յաղթանակին շնորհիւ ապահովել կիսաաւարտական հանգրուանին իր տոմարը, այլ ան գրաւեց տղոց աշխարհի ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, այսպիսով գահընկէց ընելով թիւ 1 դասուած աստրալիացի Լէյթնըն Հուիթը, որ 6-3 եւ 6-4 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք 6րդ դասուած Ֆրանսացի Սեպուլիան Կրոսանէն, դուրս մնաց մրցաշարքէն: Կիսաաւարտականի կրօնան կը ճակատի 7րդ դասուած անգլիացի Թիմ Հենմանի դէմ, որ 6-1 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրանսացի Անթոնի Տիփուրին: 33 տարեկան Ակասի, որ 6-4 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնեց 8րդ դասուած պեմբերցի Զաւիէ Մալիսէն, պէտք ունեցաւ միայն 61 վայրկեանի, դառնալու համար աշխարհի թիւ 1ը:



Ակասի

Հուիթը կրած պարտութիւնը, անոր համար եղաւ առաջինը այս մրցաշարքին ընթացքին 1999-էն ի վեր, նկատի ունենալով որ յաջորդաբար երեք տարի (1999, 2000 եւ 2001) նոյն այս մրցաշարքին տիրացած Հուիթը 17 մրցումէ ի վեր կը մնար անպարտելի (այս մրցաշարքին ընթացքին):

Կիսաաւարտականին, Ակասի պիտի ճակատի իր ազգակիցին՝ Էնտի Ռոտիքի դէմ (դասուած՝ 3րդ), որ քառորդ աւարտականին 6-3 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնեց իր ազգակիցը՝ Թէյլըր Տէնթըր (11րդ):

ՊԻՐՄԻՆԿԷՄԻՆԻ (Բրիտանիա) տեղի ունեցող աղջկանց միջազգային մրցաշարքին 9-րդ հանգրուանի մրցումներուն, 11րդ դասուած Մարի-Գայանէ Միքայելեան կրեց անակնկալ պարտութիւն մը 16 տարեկան Ռու Մարիա Շարափովայէն՝ 6-0 եւ 7-5 արդիւնքով: Նշենք, թէ Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, Մարիա պարտութեան մատնեց 23րդ դասուած ֆրանսացի Նաթալի Տըլին:

Վերջին 12 միջնորդներուն ընթացքին 125րդ դիրքը բարձրացած Մարիա, ինքզինք առաջին հարիւրին մէջ պիտի գտնէ, եթէ յաջողի քառորդ աւարտականի մրցումներուն պարտութեան մատնել իր ազգակիցը եւ թիւ 1 դասուած Էլենա Տեմենիշիլեան:

ԳԵՐՄԱՆԻՈՅ Հալ քաղաքին մէջ տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին քառորդ աւարտականի մրցումներուն, երէկ արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

1.- Ռոստէ Ֆետերէր (Զուիցերիա)	5.- Եուզենթուսալ
2.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	6.- Ռասիոն Կանտանիլ
3.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	7.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
4.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	8.- Աննօ Քիթֆըր (Ֆրանսա)
5.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	9.- Ֆարոլ Բուչերա (Սլովակիա)
6.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	10.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
7.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	11.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
8.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	12.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
9.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	13.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
10.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	14.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
11.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	15.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
12.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	16.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
13.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	17.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
14.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	18.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
15.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	19.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
16.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	20.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
17.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	21.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
18.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	22.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)
19.- Մարիա Քիթֆըր (Գերմանիա)	23.-

